

ք.Եղեգնաձոր

27.03.2018թ.

Զոհված կամ հաշմանդամ դարձած զին. ծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի նիստ Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ , հանձնաժողովի նախագահ Մ.Հարությունյանը և հանձնաժողովի անդամները :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Հայկ Բենիամինի Սեխլիյանի և Սայադ Վոլոդյայի Պետրոսյանի գործերը հերթացուցակից հանելու մասին:
 - 2 ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1016-Ն որոշման հավելվածի 14 կետի համաձայն ՀՀ Վայոց ձորի մարզի ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ուեցող նախկին զինծառայողների և զոհված/մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված շահառուների ցուցակների /ձև 3 և 4/ ուսումնասիրություն:
 2. Խաչիկ գյուղի բնակիչ Ալիկ Նորայրի Աբրահամյանի/զոհված/ և Եղեգնաձոր համայնքի բնակիչ Էդգար Սարգսի Հովհաննիսյանի/ զոհված/ բնակարանային գործերի ուսումնասիրություն:
 - 3.Զերմուկի համայնքապետարանի կողմից 2017 թվականի դեկտեմբերին հերթագրված Վահե Մեհրաբի Մարգարյանի բնակարանային գործի ուսումնասիրություն:
- Լսեցին՝ հանձնաժողովը ուսումնասիրեց Խաչիկ գյուղի բնակիչ Ալիկ Նորայրի Աբրահամյանի գործը, որը 2017 թականին <<<< Պաշտպանության նախարարության համակարգի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ուեցող նախկին զինծառայողների և զոհված/մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովը>> հետ էր վերադարձրել մարզպետարան, քանի որ 4-րդ աստիճանի վթարայնության փաստաթուղթը չէր թարմացվել տան վերանորոգումից հետո: Զոհվածի հայրը 2018 թվականի փետրվար ամսին նորից ներկայացրել է բնակելի տան 4-րդ աստիճանի վթարայնության փաստաթուղթ:
- Եղեգնաձոր համայնքի բնակիչ Էդգար Սարգսի Հովհաննիսյանի այրին Լուսինե Մանուկյանը հրաժարվել է իրեն և որդուն հասանելիք ամուսնու հայրական տան ժառագայությունից և ներկայացրել է



փաստաթղթերը, ըստ որի իր և որդու անունով անշարժ գույք չկա և ընտանիքը համարվում է անօթևան:

Ջերմուկի համայնքապետարանի կողմից հերթագրված Վահե Մեհրաբի Մարգարյանի ընտանիքը ապրում է վարձով, երեխաների՝ Ալեն Վահեի Մարգարյանի և Արգիշտի Վահեի Մարգարյանի անուններով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն անշարժ գույքի գրանցում կատարված չէ :

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հաշվի առնելով Եղեգնաձորի համայնքի ղեկավարի 09.02.2018թ. N 28 որոշումը և Արենի համայնքի ղեկավարի 14.03.2018թ. N 23 որոշումները՝ Հայկ Բենիամինի Սեխլիյանի և Սայադ Վոլոդյայի Պետրոսյանի գործերը հանել հերթացուցակից:
2. Ալիկ Նորայի Աբրահամյանի, Էդգար Սարգսի Հովհաննիսյանի, Վահե Մեհրաբի Մարգարյանի գործերը հաշվառել ձև 4 թղ ցուցակում՝ որպես անօթևան:
3. ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի 1016-Ն որոշման հավելվածի 14 կետի համաձայն շահառուների ամփոփ ցուցակները /ձև 3 և 4/ ներկայացնել ՀՀ ՊՆ:

Հանձնաժողովի նախագահ
Քարտուղար

Մ. Հարությունյան
Յ. Բաբայան